

## ՉՈՐԻ ՆԱՇԱՊԵՏ

### ԳՈՉԱ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊԱԶԲԵԳԻ

ԹԱՐԳՄ. Մ. ՆԱԽԱՍԽՐԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

### XXIV

Արանք գնումը էին միասին, լուռ ու մունջ, համարեա մեռած: Երեսները զաֆրանի պէս դեղնած, շրթունքներն սեղմւել էին և աչքերը կրակի կտորների պէս վառւում էին:

Նատ և շատ անտանելի էր նրանց դրութիւնն և այնպէս ստիպւած էին ընկճւել կամ կինմարդու պէս փախչել կամ թէ ոչխարների նման վիզները պարզել, որ արիւնարբու նուգզարի զօրքերը խանչալով կամ թրով դուրս կտրէին նրանց կոկորդները:

Պատերազմին ծարաւի կտրիձները չէին կարողացել գոնէ մի մի հրացան արձակել, որովհետև այնպէս յանկարծակի վրա տւին նրանց և ոլ դիտէ, քանի կտրիձներ, արժանի հերոսական բանաստեղծութեան, հարևանի յոյս ու ապաւէն, ընկերակիցների համար հպարտանալու համել սլներ, զուր տեղը ոչնչացել էին:

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1894 թ. № 1 և 2.

Իսկ ի՞նչ էր սպասում՝ նրանց, որոնք մահից զերծ մնացին. զերծ մնացողներին սպասում էր ընդհանուր թեմում խայտառակութիւն. որովհետև սարերում՝ անզգուշութեամբ գործին վնաս հասցնելը ծաղրի առարկայ է դառնում, այն ինչ ձախորդութիւնը քանբաղսութիւն է համարւում... Առաջին դէկլքում մարդս ծաղրու ծանակ, ստորացումն է ստանում, այն ինչ երկրորդում—խղճալ և համակրանք:

Եկող մոխւցիները այն աստիճան էին ընկճել իրանց հասած դժբաղսութիւնից, որ իրանց հաշիւ-համար չէին կարողանում տալ այն դէպքի մասին, թէ ինչպէս նուգզարի գորքը վրա տւեց, որ նրանց գալու մասին ոչինչ չիմացան:

Նրանք միիթարւում էին միայն այն բանով, որ երեք մարդ էին տանում կապոտած և իրանց կարծիքով սրանք էին օսերին և լեզգիներին ճանփա ցոյց տուղները, նրանք էին գողոնի ներս բերել թշնամու զօրքերը և սրանցով մոխւցիներին շրջապատել:

Այս բոնւածների թւում կային երկու օսեր, որոնք առաջուց փախել էին իրանց ժողովուրդից և ձորումն ասպնջականութիւն էին դաել. սրանցից մատնութիւնն ու լրտեսութիւնը սպասելու բաներ էին. բայց բոնւածն էր սրանց սիրտը ճաքեցնում: Սա էր մոխւցի, որի վարմունքը ամբողջ ձորն էր արատաւորում:

Տիրած, սըստացած ու հոգեպէս ընկած 0նիսէն հետեւում էր այս բազմութեանը և ոչ ոքին չէր համարձակւում ուղղակի երեսին նայելու:

—Քիզ էլ բոնեցին,—0նիսէ,—յանկարծ լսեց նա, ցնցւեց, նայեց ու մնաց ապշած:

Նրա աչքի առաջ կանգնած էր գոյնը նետած ու յուգւած Գուգուան, որ ամբողջ մարմնով զողդողում էր:

—Գուգուա, —վերջը հաղիւ կարողացաւ արտասանել 0նիսէն և մատնացոյց արեց նրա կապկապած ձեռների վրա.—ի՞նչ է պատահել, ի՞նչի են քեզ կապուել:

—Մատնչութեան մէջ են մեղադրում ինձ,—խուլ կերպով արտասանեց նա և չափազնց կատարութիւնից թքեց:

0նիսէն լաւ էր ճանաչում նրան, փորձել էր շատ անգամ և հաւաստիացած էր, որ նա անընդունակ է ընկերներին դաւաճս նե-

լու. բայցի այս, պատահած քամբաղտութիւնից առաջ, նա Գուգուաչին Զիձիայի հետ միասին տեսաւ, իր ականջներով լսեց նրանց խօսակցութիւնն և տեսաւ, որ Գուգուան բոլորովին մի այլ դիտաւորութեամբ դիմեց զէպի մոխւցիների բանակը։ Գուգուան Յնիսէի մահն էր յանկանում, Յնիսէն էր սրա թշնամին, նրա դէմ էր ատելութեամբ գրգուել։

«Բայց կարող է լինել...» յանկարծ անցկացաւ Յնիսէի մոքովը, այս մարդը թշնամութիւն էր տածում իմ դէմ, այս զօրքի ապահովութիւնը ինձ էր յանձնաւած և վրէժինդրութեան զգացմունքի պատճառով մասնութեամն է դիմել։

Յնիսէն նոթերը կիտեց և անդուրեկան զգացմունք արտայացածեց ակոլիքները կրծտելով։

—Ինչի՞ բան չես ասում ինձ. —սկսեց դարձեալ Գուգուան։  
—Ել ինչ պէտք է ասեմ։

—Ուրեմն այլ ևս բան չհնչես ասելու, —զառնապէս արտասանեց Գուգուան և աւելցրեց. —Լաւ, ես ևս կը լուեմ... Փառք տուր Աստծուն, որ այլ ևս անկարող եմ զլուխս արդարացնել, թէ չէ Աստուած է վիայ, շատ էլ երկար չէի նայել տայ քեզ արեգակին... հիմի օրը քոնն է։ Այժմ քո ծաղիկն է բացւել, քո արևն է փայլում... երեկի այսպէս է կամենում Արարիչն ու թող փայլէ... Մեռնելովս չեմ վշտանում, սակայն վայ ինձ, որ ամենքի համար արիւնակիցների դաւաճան կը մնամ։

Այս խօսքերից յետոյ Գուգուան զլուխը կախեց, կարծես ծանր բեռը դրին նրա վզի վրա, փղձկալից հառաչեց «0-օհ» և հեռացաւ Յնիսէից. Յնիսէի սրտին մի կաթիլ թոյն էր սպակասում, որ լեցէր բերնէբերան, իսկ Գուգուան շատ կաթիլներ լցրեց մէջը։

## XXV

Տակաւին գիշերն ու ցերեկը չէին բաժանւել, երբ Սիռնի ամրութեան մէջ ձորի ամբողջ զօրքը շարժումի մէջ ընկաւ. սրանք իմացել էին, որ Նուզզարի զօրքերը վերցրել էին նրանց առաջին ամրութիւնը և միջի եղած մոխւցի (ձորեցի) ամբողջ գնդից մի շատ փոքր թիւ մահից զերծ մնաց։ Բոլորն էլ բորբոքւել էին վրէժինդրութեամբ և հրավառ աչքերով, բարկութիւն ժայթքող բերաններով վրէժինդրութիւն էին գոռում բարձրաձան։

—Արթւն, արթւն.—բացազանչում էին բոլորը և նրանց բերանից այլ խօսք չէր լսւում։ Միմիան գոնուում էր նրանց թշում մի մարդ, որ ոչինչ չէր մոռանում, ինչպիսի կացութեան մէջ էլ գոնուելիս լինէր, և միշտ ժամանակ էր գտնում գործի ամեն մի մանրամասնութիւնների վրա ուշագրութիւն դարձնել։

Սա Գոչան էր, և այս պատճառով ապսպրեց առաջին ամբութեան մէջ մահից ազատուած մոխեցիսերին։

Գոչան մեծ յոց ունէր իր որդու վրա և նա էլ այնտեղ էր, ուրեմն ինչպէս էր պատահել, որ թշնամին առանց նկատելու վրա տւեց։

—Պատմեցէք, պատմեցէք շուտով, ինչպէս պատահեց գործը։  
—սկսեց Գոչան հէնց որ վերադարձներին տեսաւ։

—Է՛լ ինչ ինչպէս պատուահեց։—սկսեց եկողներից մէկը։ Բեչիրա և Թափսիրուզօ օսերը գնացել էին թշնամինների մօտ, ցոյց էին տել գաղտնի ճանփէն և մինչև որ թշնամին մեր գլխին չկանգնեց, մենք ոչինչ չիմացանք...

Խօսողը լոեց, այն ինչ Գոչան ամբողջովին լսողութիւն էր դառել. նրա սիրուլ տրոփում էր և կարծես թէ մի անդուրեկան համբաւի էր սպասում։

—Ուրիշ. թէ մի այլ մարդ էլ է եղել։—հարցրեց փոքր լռութիւնից յետոյ և նոթերը կիտեց։

—Լաւ կը լինէր, եթէ սրանցից աւել ոչ ոք չլինէր։

—Ուրիշ ո՞վ է։—շուտով հարցրեց Գոչան և աչքերը հրավառուեցին։

Նա յառեց աչքերը խօսողի վրա, որը գժւարանում էր կարծես մատնիչի անունը յայտնել։

—Ո՞վ է, ասում եմ քեզ.՝խստաբար կրկնեց Գոչան։

—Գուգուան է։

—Ի՞նչպէս, ինչպէս ասիր.՝կալծակնահարի պէս բացազանչեց ալեորն ու կոկորդում խրխոռոց լսւեց. Գոչան կարծեց թէ լսողութիւնը դաւաճանեց իրեն։

—Գոգուան, —կրկնեց մոխեցին։

Խիստ գժւարատար էր Գոչայի համար իր զրացու անունի լսելը, այն զրացու, որ իր ծուխին էր պատկանում և, հետեալիս, Գուգուայի վարմունքին ինքն էլ մասնակից պէտք է լինէր։

—Տէր Աստւած, ինչով մեղանչեցինք, որ մեզ ընկերակիցների դաւաճանին էլ արժանացրիր.—արտասանեց ծերունին և աչքերը դէպի երկինք դարձեց:

Նրա սիրով տոչորւում էր դառնապէս ժողովուրդի այս կերպ արատաւորւթիլլ տեսնելով և լաւ էր հասկանում, որ այս օրինակը կարող էր շատ վատ ներգործութիւն ունենալ ժողովուրդի վրա:

Ծերունին դարձեալ լռեց, մտածմունքների մէջ խորասուզւեց ու երկար ժամանակ մնաց այնպէս առանց ձայն հանելու: Սրա դէմքը այս վայրկեանին ամբողջովին շարժողութեան մէջ էր և պարզ կերպով երեւում էր, որ սրա մտածողութիւնը բանում էր անդադար:

Վերջապէս կնճռուած ճակատը շիեց ձեռքով և առաջին անգամ նշմարւեց նրա վրա վեհերոսութիւն: Սրա աչքերը, կարծես, պաղասանք ու քըքւանք էին արտայացուում՝ միւնոյն ժամանակ: Բայց ի՞նչ ունէր ձորի նահապեալ, ձորի առաջնորդը, անմեղ պատերազմողներին խնդրելու կամ քիքս գալու<sup>1)</sup>:

Գոչան վիմիակ զաւակ ունէր, որ յազմւած ամրութեան պաշտպանողների թւումն էր գոնսուում: բայց նա այլ ևս չէր երեւում... Հապա ի՞նչ եղաւ նա, ի՞նչի պատմողը բան չէ ասում նրա մասին տարաբաղդ հօրը... իսկ եթէ մեւաւ՝ ի՞նչի ուրեմն համբաւաբերը չի միմիթարում հօր տիրամած սիրալ որդու հերոսական մահը պատմելով:

Այս ամենը ծագեց ալեորի մտքում րոպէտապէս և նրա սիրով սկսեց ուժգին տագնապել: Այլ ևս չկարողացաւ համբերել ծերունին ու նորից նայեց մեղմօրէն, հաւաքեց իր վերջին ոյժն ու արտասանեց.

—Ի՞նչ եղաւ հասկա Յնիսէն, ի՞նչի ևս թագցնում ինձանից:

—Յնիսէն, տարաքաղգը... քիչ մնաց գժւէր... Եթէ մենք չլինէինք՝ թշնամու ձեռքով մաս-մաս կը լինէր, Աստւած է վկայ:

Գոչան սրանով փոքր ինչ անդորրւեց. նրա զաւակը ողջ էր և կտրճութիւն էր ցոյց տւել: Այլ ևս ի՞նչ էր ցանկանում ծերունին:

—Իսկ հիմի որտեղ է նա:

<sup>1)</sup> Քիքս գալ=մէկին արած լաւութիւնը երեսով տալ:

—Այժմ փոքր ինչ հանգիստ է և ընկերների մօտն է գտնվում։  
—պատասխանեց միւսնոյն խօսակիցը և փոքր ինչ լուսութիւնից յետոյ աւելցրեց։—այնպէս է խեղճը, որ դանակով անգամ չէ կարելի նրա բերանը բաց անել։

Ծերունին բաւականացաւ այս հարցութիւնով և հանգստացաւ,  
որովհետեւ այն կացութեան մէջ կարելի էր խաղաղւել։

—Ասա, թող մեղապարտներին բանտարկեն ու լաւ հսկեն  
նրանց վրա... մենք էլ յիշենք Աստծուն և մեր եղբայրների արիւ-  
նի վրէժը խնդրենք։—արտասանեց Գոչան և դուրս եկաւ, որ-  
տեղ զօրքերը արդէն հաւաքւել էին և անհամբեր սպասում էին  
թշնամու վրա յարձակւելու վայրկեանին։

## XXVI

**Գոչաչի** դուրս գալուն պէս ձորի զօրքը կամաց շարժւեց,  
երեք ռազմի շաժանւեց և գլխաւորների առաջնորդութիւնով դի-  
մեց դէպի թշնամու զօրքը։ Նրանք վճռել էին յարձակւել նուզզարի  
կազմած ամրութեան վրա երեք կողմից և ընդհանուր արշաւանքով  
թշնամուց վրէժը լուծել։ Բոլորի համար էլ ակնյայսնի էր, որ այս  
ճակատամարտով պէտք է վճռէկը ձորի ապագայ դրութիւնը, բաղդն  
ու վիճակը։

Բոլորն էլ աւագ էին գնում ժամանակ գէմքով, որովհետեւ հա-  
ւատացած էին, որ սրբազն պարտք էին հատուցանում և, եթէ  
մեռնէին ևս, իրանց անունը երկար ժամանակ կը յիշատակւէր ժո-  
ղովուրդի մէջ և հեռաւոր սարերում կը հռչակւէր։ Նրանց սպա-  
սում էր աշխարհիս երեսին ցանկալի անուն, իսկ այն կեանքում—  
երկնային վարձարութիւն։ Հետևապէս պատերազմը անկախ կեանք  
վարելը, հայրենիքի հողն ու ջուրը պաշտպանելը, այս կերպ հա-  
ւատացող ժողովուրդի համար, զւարձալի հանդէս գնալուն էր նման-  
ւում։ Պատերազմելու և թշնամու հետ մարտնչելու ծարաւը աւելի  
ևս բոբբոքւում էր կոտորած եղբայրակիցների տանշանքները մտա-  
բերելով, որ նրանց սրտերը աւելի էին յուզւում և վիթած արիւ-  
նի փոխանակ արիւնի էին ծարաւում։

Առաջացող մնիսեցիների թւում գտնւում էր նաև Յնիսէն,  
որի յարատեւ ուրախ, ժպտուն դէմքը սաստիկ կսկծից փոխւել էր

և սաստիկ սեղմած շրթունքների պատճառով դէմքի մորթն էլ ձիգ ձգւել էր; Նրա աչքերի հրավառւելուց այսուրը կարծես դուրս էին ցցւել և, իբրև զայրոյթի նշան քններակները զարկում էին ուժ-գնապէս:

0նիսէն, իբրև բնականապէս կտրիճ և գլուխը յետ դրած տղամարդ, այսօր շատ պատճառներ ունէր կրինապատիկ դառնալու, որովհետեւ զգում էր իր սխալմունքը և ինքնամուացութիւնն և ցանկանում էր առաւել գլուխը յետ դրածութիւնով իր մեղքը փոքր ինչ թեթևայնել:

Նրան էին պահ տւած քանի մի մարդիք, որոնք մոխեցի զօրքի մի գունդ էին կազմում և յանձնարարւած էր իրան՝ թշնամի զօրքի կողմից նշանակւած պահապաններին գողունի կերպով մօտենալ և կամ գերել նրանց, կամ կոտորել; Միւնոյն ժամանակ այս գործողութիւնը այնպէս պէտք է կատարւէր, որ թշնամու ամենագլխաւոր գունդը չիմանար, որպէս զի նրանք անկարող լինէին պատրաստի լինել մոխեցիներին գէմ դնելու:

0նիսէն առաջնորդում էր իր փոքրաթիւ զօրքին և ամեն կերպ ջանում էր հրամանը «անշեղ» կատարել: Բոլորից առաջ էր գնում ամբողջովին լուռութիւն դարձած 0նիսէն, որին հետեւում էին միւսները շարք-շարք, որոնք քայլում էին զգուշութեամբ և ոտերը դնում էին համարեա թէ այնտեղ, որտեղ մի վայրկեան առաջ նրանց գլխաւորի ոտն էր եղել դրւած:

Սաղը<sup>1)</sup> տեղերը անցնելու համար վերին աստիճանի զգուշութիւն և ոտերի ճարսիկութիւն էր հարկաւոր, որպէս զի քարերի շարժելով գիշերացին լուռութիւնը շխանգարեին և թշնամու ուշադրութիւնը իրանց վրա չլարձնէին: Բանդուներն<sup>2)</sup> հագած մոխեցիները սուրում էին դողունի և մինչև որ մի հաստատ քայլ կանէին, քանի մի վայրկեան տեղի ամրութիւնը ոտներով էին փորձում: 0նիսէն յանկարծ կանդ առաւ և այնտեղ և եթ պառկեց. միւսներն էլ առանց ձայն հանելու նոյնպէս վարւեցին և գետնին կպածները խանչալները հանեցին պատեաններից:

<sup>1)</sup> Սաղը նոյն է ինչ թուրքերէն չակլը

<sup>2)</sup> Տրեխ—փափում:

Անցաւ քանի մի բողէ այս կերպ լռութեան մէջ և դիմացի կողմի վրա հինգ մարդ լոյս ընկան, որոնք նոյնպէս զգուշութեամբ և լուս ու մունջ առաջ էին գալիս: Յնիսէն միջոց տւեց մինչև որ վերջինները առաջ կը գային և, հէնց որ մօտեցան, յանկարծ ուի վրա ելաւ պառկած տեղից. սրա հետ միասին վերկացան միւսներն ևս ու, մի վայրկեանից յետոյ, տեղը զննելու համար զրկւած օսերը գետնի վրա թեփոխկ-թեփոխկ էին անում և որքան արնաբամ էին լինում, այնքան աւելի խիստ էին մահի հետ մարտնչում:

Այս ամենը այնպէս արագ կատարեց, որ օսերը մի անգամ բղաւել անգամ չկարողացան: Երբ արդէն սրանց գործը վերջացրին, նորից շարունակեցին իրանց ճանփէն և արշալոյսի բացւելու հետ միասին թշնամու բանակին մօտեցան. այստեղ գաղեցան և սկսեցին յետեկից եկող լնկերներին սպասել: Թշնամու բանակում կատարեալ անդորրութիւնն էր տիրում. որովհետև, մի կողմից, առաջին յաղթութիւնով հպարտացած և, միւս կողմից, հաւատայած լինելով իրանց պահնակների զգուշութեան վրա, հանգիստ, հանդարտ քնի էին յանձնելի: Նուգզարը համոզւած էր, որ մոխեցիները կը վախենային և երկրորդ կամ երրորդ օրը միջնորդներ կը զրկէին: Նա չէր կարող երեակացել երբէք, որ մոխեցի մի բուռն ժողովուրդ կը համարձակէր նրա դէմ մարտնչել, նա մանաւանդ այն պատճառով, որ իր մօտ գտնւում էին բաւականին թւով լաւ զինւած և պատերազմի մէջ վարժւած լեգու զօրքեր:

Մոխեցիները երեք կողմից էլ պատւեցին և աննկատելի կերպով թշնամուն շրջապատեցին:

Ճակթեց յանկարծ մի հրացան և այս էր ընդհանուր յարձակման նշանը:

Նուգզարի զօրքերը վեր թւան տեղներից, սակայն չսպասածին պատճառով խառնւեցին և խելքները կորցրած պատերազմողները անմիտ կերպով դէն ու դէն էին վազվզում: Ներս խուժած մոխեցիները ժամանակ չէին տալիս նրանց ուշքի գալու և անխնայաբար կոտորում էին: Այս ընդհանուր խառնաշփոթութեան մէջ միտեղ միայն երեւում էին ճերմակ ձին և սրա վրա հեծած նուգզարը, որ ձեռին թուր բռնած աջ ու ձախ կոտորում էր: Նրա մօտ կանգնել էին քանի մի քաջամարդիկ լեգիներ և ար-

ժանաւոր շուք էին տալիս նրան. աշկարա երևում էր, որ նրանց սիրտերը բորբոքում էին աւելի կարճութեամբ քան թէ այն թրուսօցիներինը, որոնք թշնամու հետ մարանչելուց՝ փախչելն աւելի էին գերազառում:

Այս լնդհանուր խառնակութեան միջոցներում Յնիսէն գինովցածի նման վազվզում էր և որին էլ պատահում էր՝ էլ շատ չէր նայել տալիս արևեն: Նա որոնում էր կատաղի կրիւ և, ինչտեղ էլ լոյս էր ընկնում, կայծակի արագութեամբ մէջն էր ընկնում և, թէեւ մահ էր ուզում գտնել, սակայն դիւթածի սկս անվնաս էր մնում ամեն տեղ:

Նրա կտրճութիւնը, սրտալիութիւնը և անձնազոհութիւնը հիացնում էին տեսնողներին և գովասանք էին արտասանել տալիս:

Էլուրի վրա յանկարծ երևաց Գոչան, որի ճերմակած մազերը խառնւել՝ քամու հետ էին խաղում. ձեռին բռնած դրօշակը ծածանում էր յուսատու կերպով և ծայրին ամրացրած ոսկէ խաչը փայլատակում էր:

Գոչայի ձին քայլում էր վեհ և հպարտօրէն, կարծես զգում էր թէ իր հեծորը ժողովուրդի ընտրւածն է, որ երբէք դժգոհութեան առիթ տւած չէ իր ընտրողներին:

Ծերունին ջգրւեց ձիուն, չափ գցեց դէպի այն կողմը, որտեղ նուգգարը քանի մի մարդկանցով տակաւին պատերազմում էր:

—Աբա, աղէրք... հետեւցէք ինձ, որոնց սրտները բարախում են, —գոչեց Գոչան և բազմութիւնը շուտով խմբւեց, գունդի նման կծկւեց նուգգարի շուրջը:

Սարսափելի թող բարձրացաւ, բոլորը թողի մէջ կորան, կարծես արևի լոյսն ևս մժնեց: Մինչև այժմ զիժինա տւողները հիմնաւել էին և խորին լուսութիւնը խանդարւում էր ատամների կրծքումից, երբեմն անքորդից և զէնքերի շաշիւնից:

Երբեմնակի քամուց քշւած թողի միջից երևում էր Գոչայի դրօշակը, որ դարձեալ անվնաս ծածանւում էր և մարտնչողների սրտները պողպատ էր կտրացնում: Խմբւած բազմութիւնը յանկարծում էն մի տեսակ պտոյտ գործեց, ցրւեց և նորից սկսեց զիժինա տալ:

Քամին ցրւեց թողը և մի վայրկեան առաջ կեանքով եռացող մարտնչողների դիակներով կերտւած մի կոշկ երևաց: Նրանց մօտ

կանգնած էր Գոչան տիրաւած, գոյնը նետած և արտասւալից աչքերը դէպի երկինք յառած։ Հեռու ձանփի վրա թող էր բարձրանում և նրա միջից երբեմնապէս երևան էր գալիս նուզարն ու քանի մի հեծւորներ, որոնք մահից ազատւել էին մի տեսակ հրաշքով։

## XXVII

Բազմութիւնը խաղաղւեց, թաղումեց մեռածներին. սակայն դեռ ևս չէր ցրւում, թէև համոզւած էր, որ նուզզարն այնպէս շուտով չէր վերադառնաց և խրանակ օսերին այնպէս հեշտութեամբ չէր կարող համոզել մոխեցիների վրա նորից յարձակումն գործելու։

Այս բլրակի մի կողմը շրջանակի դարսուած քարերի վրա խմբւել էին դեկանոզները<sup>1)</sup> գեղի դրօշակներով և ձորի նահապետ Գոչայի բոլորի շուրջն էին կանգնել։ Այս շրջանը բաց էր միայն մի կողմից և այնտեղ էր խմբւել մնացած բազմութիւնը։ Բոլորի դէմքերի վրա տիրութիւն էր դրօշմւած, մարդ չէր կարող հասկանալ թէ արդեօք սգաւորութիւն էր իրանց կարուսաի պատճառով թէ որ և է անախորժ դէպքի էին սպասում։ Գոշան և նրա հետ միասին գտնւող համայնքների գլխաւորները գլուխները կախած և առանց ձայն հանելու ինչ որ մոտածմունքի մէջ էին խորասուզւած։ Վերին աստիճան անստանելի էր դրութիւնն, և և մութն էր նկարւած պատկերը, նայողի սիրտը տնկում էր սպասելուց։

Գոչան բարձրացրեց յանկարծ գլուխն և այնտեղարենքին նայեց տրտմալից աչքերով։ Օնիսէն, որ այն բազմութեան մէջն էր գտնւում և Գոչային էր նայում, սառսուաց, չկարողացաւ այլ ևս ծերունուն ուղղակի նայել և գլուխը կախեց։

Գոչան յառեց աչքերը Օնիսէի վրա, սակայն շտապով միւս կողմը նայեց և մեղմաբար, բայց հաստատ ձայնով բացականչեց։

— Բերէք այստեղ մեղմապարտներին։

Ամբոխը շարժւեց, երկու մասի բաժանւեց և համայնքի լնարւած գատաւորների առաջ ներկայացան երկու օս և Գուգուան։ Ժողովուրդը դողդողալով էր նայում՝ այս պատկերին և սպա-

<sup>1)</sup> Գեղի հոգևոր պետ կամ գահերէց։

սում էր այն վայրկեանին, երբ բարձրադրոյն հրաման պէտք է սոսանար և, ով գիտէ, ի՞նչպիսի վճիռ պէտք է կայացնէր:

—Արձակեցէք դրանց ձեռքերը, —հրամացեց Գոչան, և նրա հրամանը շուտով կատարւեց:

Սրանից յետոյ ձորի նահապետ Գոչան արմուկը դրեց ծնկան վրա, յենեց ձեռքի վրա գլուխն և, ամբողջովին լսողութիւն դարձած, այնպէս մնաց:

Համայնքների զլիսաւորներից ամենաերէցը ոտի ելաւ, անցաւ մէջ տեղը, չոքեց ու բացականչեց.

—Այ ժողովուրդ և ջամահաթ... ուշադրութիւն և լսողութիւն... ահա ձեր առաջ կանգնած են երկու օսեր... վեց տարի է անցել այն օրից, երբ սրանք մեր համայնքն եկան, մեր գութը շարժեցին և հասկացրին, որ իրանց ժողովրդի մէջ ապրել անկարող էին այլ ևս, որովհետեւ մարդ էին սպանել և սրանց հալածում էին... Հայ, հայ, որ վկաս բան է կամովին մարդ սպանել, մեղք էլ է, սակայն երբ մարդունեղ զրութեան մէջ է գտնւում, ոչ թէ միայն ուրիշին է սպանում, անձնասպան էլ է լինում... Մարդասպանութիւնը քամբազտութիւն է և այս գերազաները ձորից մի կտոր հաց ու ասպնջականութիւն էին խնդրում... Զորը սովոր չէ հիւրից թագէել, աղքատին չողորմել. ձորը սրանց բինա տւեց, տուն շինեց սրանց համար, վարելահողից զիջաւ, ձորը եղբօր պէս ընդունեց ու հանգիստ կենցաղ մատակարարեց սրանց... Սրանք ի՞նչով ցոյց տւին մեզ իրանց երախտապարտութիւնը... Մեր թշնամուն ցոյց տւին գալու գեծանները, մեր զօրքերի զլիսին կանգնեցրին և ով որ սրանց մի պատառ հաց էր տւել, սրանց բեռը թեթեացրել էր, նրանց դաւաճանութեամբ կոսորել տւին... Ի՞նչ կասէք, այ ժողովուրդ, այ ջամահաթ... ամեն բան պատմեցի, բոլորը հասկացրի ձեզ, մարդու մահը հանաք բան չէ:

Մոխեցին ոտի կանգնեց, գլուխ տւեց բոլորին և իր տեղը նստեց:

—Արդարացրէք ձեզ, եթէ կարող էք, —արտասանեց Գոչան, որ իր զրութիւնը չէր փոխել:

Հանդիսատեսները անդադար յուզում էին, սակայն գործի մէջ չէին խառնում: Օսերի մեղապարտութիւնը այն աստիճան ակնյացմնի էր, որ չէին կարող իրանց արդարացնել և այս պատճառով

չոքեցին ու խնդրելով ներումն էին աղերսում. սակայն դատաւոր-ները նրանց աղերսանքին ականջ չէին դնում: Նրանք խմբւեցին Գոչայի շուրջը, քանի մի փայտկեան ինչ որ խօսեցին և դարձեալ իրանց տեղները նստուեցին: Փոքր ինչ լռութիւնից յետոյ Գոչան բարձրացրեց գլուխն ու բացականչեց.

—Երկուսն էլ քարկոծւեն:

Այս խօսքերը սաւսուռի նման անցան ժողովրդի մէջ ու օսերը գոյները նետեցին ամբողջովին:

Սրանցից մէկը մօտեցաւ Գոչային, որ վճիռը յայտնելուց յետոյ դարձեալ գլուխը կախեց և խորը մտածմունքների մէջ ընկղմեց:

—Գոչան, աղերսում եմ, —ասեց օսը. —Ճորտդ կը դառնամ, միայն թէ աղատես ինձ:

—Քարբոծւեն, —միւնոյն ձայնով կրկնեց Գոչան:

—Ուրեմն պէտք է սպանեն ինձ, պէտք է քարկոծեն... զոչեց օսն ու շտափով ոտքի ելաւ. —թող սպանեն, սակայն քեզ էլ ողջ չեմ թողնի:

Այս խօսքերի հետ միասին, օսի ձեռին շողաց խանչալը, որ չուխէքի տակն ունէր թագցրած: Ամբոխը բոպէապէս վրա պրծաւ այնտեղ, գնդի նման կծկւեց և երբ ցրւեց, Գոչան դարձեալ այն-պէս վեհաբար նստած էր. տեղիցն էլ չէր շարժւել ծերունին: Միայն զգւանք էին արտայայտում ներկայ գտնւողների դէմքերը, որոնք այնտեղ շանսատակ եղած օսերի վրա էին նայում:

### XXVIII

Երբ օսերի հետ գործը վերջացրին, Գոչան դարձեալ մտած-մունքի մէջ խորասուզեց և մեղմ ու հանդարա ձայնով արտասանեց.

—Բերէք Գուգուային այստեղ:

Քանի մի անձեր մօտեցան Գուգուային, արձակեցին ձեռները և առաջ բերին: Հրամանը լսելուն պէս մնխեցու աչքերը մթնեցին, օրօրւեց, տառանւեց, սակայն ուշքը հաւաքելով՝ հաստատ կանգ առաւ:

Ամբաստանւած Գուգուան բոլորովին սիրթնած և բերանը ցա-մաքած՝ կանգնել էր ժողովուրդի առաջ և աչքերը աննպատակ յա-ռել էր մի կէտի վրա:

Բազմութիւնը անիծում՝ էր նրան, լիցոցներ էր ժայթքում նրա երեսին և իրարու մատով էին ցոյց տալիս այս աւազակի վրա; Ինչպէս անցեալ անգամ, հիմի ևս համաչափների գլխաւորներից դուրս եկաւ մէկն ու սկսեց Գուգուային դատապարտել:

Բանից երեց, որ երբ թշնամու զօրքը շտապով արշաւում էր դէպի մոխացիների բնէն, Գուգուան նրանց առաջից էր վագում և, կասկած չկայ, Նուգզարի զօրքերին ճանփա էր ցոյց տալիս:

—Արդարացիր, եթէ կարող ես.—սաեց նրան Գոչան ու լոեց:

Գուգուան հառաչեց ուժգնապէս, նայեց այն տեղարինքի շուրջը և տեսաւ Օնիսէին այնտեղ քարացածի պէս կանգնած: Փայլեցին Գուգուայի աչքերը, դէմքը կարմրեց, ձիգ տւեց զօրով նրա կողմը, օրօրւեց, բայց կանգ առաւ: Գուգուան դարձաւ դատաւորներին և սասարիկ կսկծից ծամածուած դէմքով նայեց նրանց: Վերջը վերցրեց գլխից գղակը, կարծես թէ այրում էր նրան և գետնովը տւեց:

—Ասա, եթէ ասելու բան ունես. —կրկնեց Գոչան և մի աեղ ձայնը դաւաճանեց նրան, մի տեղ կտրւած լարի պէս հնչեց:

—Ի՞նչ ասեմ, ի՞նչ յայտնեմ ձեզ... դառնապէս բացագանչեց Գուգուան.—Աստուծուն յայտնի է, որ մեղապարտ չեմ: սակայն թշնամու առաջից վազելն տեսան և ով կը հաւատայ ինձ... Այլ ևս ի՞նչի էք տանջում ինձ... Սպանեցէք և գուք էլ կը հանգստանաք:

—Այ աղայ, քեզ սպանելը դժար չէ... փոքր ինչ լուսթիւնից յետոյ ասեց նորից Գոչան և ձայնի մէջ սրաացոյզ սէր նշարւեց.—քայց սիրտա չէ հաւատում, որ ձորի հող ու ջրի մարդը, ձորի ծծերով սնւածը եղբայրներին դաւաճանելու ընդունակ լինէր, որ ընկերներին ծախսէր, որ գետինը կը քանդէ և երկինք կը կործանէ: Սիրոը կը տնքայ միշտ և հանապազ, վիշաը չի պակասի, չի կարող տիրութիւնը փարստել եթէ քեզ ուղիղ դաւաճանող համարեց:

Գուգուայի սիրտը ամոքւեց. նա տեսաւ որ ծերունին հայրական գորովով էր վարւում հետը և սրտանց էր ցանկանում պատկառելի անձնաւորութեանը համոզել, որ ինքը արդար էր:

Գոչան, Աստուած է վկայ, սուրբ Սպարս հրեշտակի զօրքը գիտենայ, երդւում եմ իմ ջահել արևովս, երդւում եմ նաև անունովդ, որ ես յանցաւոր չեմ. սակայն չեմ կարողանում գլուխս արդարացնել և պէտք է դատապարտեմ, պէտք է մեռնեմ:

—Թշնամու զօրքի մէջ ինչպէս ընկար:

—Ի՞նչպէս... կամենում ես ամեն բան ասել տաս ինձ... հանգիստ թող ինձ, Գոշա... ինձ մի՛ խօսեցնիլ... Տեսնում ես հօ, որ անկարանում եմ խօսել... Դու որ միշտ բարեսիրտն ես եղել, այսօր ինչի ես ցանկանում ինձ չարշարել:

—Սիրտս էլ հանգիստ չէ, Գուգուառ, Աստծուն է յայտնի... ամեն մի խօսքին, ամեն մի հարցմունքին նետեր են ցցւում սրտիս մէջ. սակայն համայնքն ու սրա գործը քեզ վրա էլ բարձր է, ինձ վրա էլ... ուրեմն յայտնիր մեզ ամեն բան:

—Յայտնեմ... լաւ ուժեմն... գոչեց մոխեցին և շուտով դարձաւ այն կողմը, որտեղ Յնիսէն էր կանգնած:

Դժբաղտի գէմքը ծամածուել էր բոլորվին և ծանր բեռան տակ կարծես չորս տակ էր ծալւել. զեղնած գէմքի վրա կեանքի ամենափոքր նշոյլ անգամ չէր նշմարւում: Գուգուան դարձեալ կանդ առաւ, սրտապնդւեց ու դիմեց դատաւորներին:

—Ականջ գրէք ինձ... մահից չեմ երկնչում, եթէ արդարացնելու լինէք ինձ նոյն իսկ, Աստւած է վկայ, ինքս կըսպանեմ ինձ: Էլ ինչիս է հարկաւոր մի անգամ արդէն արատաւորւած կեանքս... Ուրեմն լսեցէք, ամենը ճշտութեամբ կը յայտնիմ: Ես սարիցն էի դալիս և երբ տափարակ դաշտի վրայ գտնւեցի՝ թշնամուն հանդիպեցի... փախայ, որ մեր թագստում գանւողներին իմաց տայի. բացց թշնամին հասաէ-հաս հետևում էր ինձ և չկարողացայ յաջողել... Նրանք հրացան չէին արձակում վրաս, որ աղմուկի պատճառով մեր զօրքերը գուրս չգային, իսկ իմ հրացանի չախմախը քանդւել էր... մերոնք ինձ թշնամիների մէջ տեսան և դաւաճանի տեղ լնդունեցին... թէ սուտ ասելու լինէմ, թող գետինը պատռւի և ինձ վար տանի...

—Սարումն ինչ ունէիր.—հարցը դատաւորներից մէկը:

—Գործ ունէի:

—Մենամկ էիր:

Գուգուան չպատասխանեց ու այս պատճառով միւնոյն հարցը կը կնեցին նրան.

—Մենամկ էիր:

Գուգուան մարտնչում էր իր զգացմունքի գէմ ու չէր կամե-

նում հրապարակ հանել այն աղջկայ անոնը, որը դարձեալ աշխարհից աւելի թանգագին էր իր համար:

—Այդ ի՞նչ ասել է, մենակ էի, թէ ոչ,—վերջապէս ասեց Գուգուան ու աւելցրեց.—ձեզ համար միայն հարկաւոր է զիտենալ թէ, ձեզ մասնել եմ, թէ ոչ... ես ձեզ յայտնում եմ, որ ձեզ չեմ ծախել, չեմ դաւաճանել. կեանքում երբէք չեմ էլ երևակայել ձեզ գիմադրել, վկան ինքն Ասուած է... Այլ ես բան միք հարցնի ինձ, պատասխանս չի օգնի և մահից առաջ կեանքիս քանի մի վայրկեաններս կը թունաւորի:

Սրանից յետոյ լռեց Գուգուան, ձեռքերը կրծքին խաչմերեց և մնաց այնպէս անխօս: Բոլոր հարցումներին նա լռութեամբ էր պատասխանում և սրա անխօսութիւնը 0նիսէի սրտին ծանր քարի պէս էր ձնշում:

Լուռ էր ժողովուրդը և շունչները քաշած սպասում էր համայնքների գլխաւորների վճիռ տալուն, որոնք Գոչայի շուրջն էին բոլորւել: Բաւականի երկար միջոց անցաւ մինչև որ գլխաւորները վճիռ կը կայացնէին:

Յանկարծ գլխաւորները ցրւեցին և լողների սրտի բարախը աւելի սաստկացաւ: Համբերութեան չափ ու սահմանն անցաւ: Ամենքն իրանց տեղերը գնացին և այս լնդհանուր լռութեան միջոցին Գոչան սոտի ելաւ:

—Ներիր մեզ, երկնային Հայր, եթէ մի բանով սխալում ենք... Ինչ որ ներշնչեցիր մեզ, այն ենք յայտնում... Զորի բարեկեցութիւնը պահանջում է, որ Գուգուան զրկվի և համայնքից և իր ազգականներից... թոյլ է տրւում միայն նրա կնոջը հետևել նրան: Այս օրւանից ի վեր ոչ ոք իրաւունք չունի նրան կրակ տալ եթէ անկրակ տեսնէ նրան, ջուր տալ՝ եթէ ծարաւ տեսնէ, հաց տալ՝ եթէ քաղցած տեսնէ... բոլորի դուռը փակ պէտք է մնայ սրա առաջ, ամենքը անխօս պէտք է մնան սրան պատասխանելու, պարտաւոր են բոլորը խլանալ սրա խնդիրքը լսելու... Զորի խեչհրեշտակներ, համայնքի խօսք կոտրողին և չպահողին խոռվ կենաք...  
—Յետմի, —յանկարծ մեկը բռնեց Գոչայի թևից և լնդհատեց նրա խօսքը:

Ժողովուրդը զարմանքով նայեց ձորի նահապետի ձեռքը բռնո-

զին, նա մանաւանդ այն վայրկեանին, երբ նահապետը, ձորի սըրբութիւնը, դրօշակների ամենառաջինն ունէր ձեռին բոնած: Նրանց աչքի առաջ Ծնիսէն էր կանգնած:

—Յետո՞յ, ձորի նահապետ, Գուգուան ճշմարիտ է.—ասեց Ծնիսէն, որի մազերը խառնւել էին և աչքերը այն աստիճանի արիւնակալել էին, որ կարծես թէ ուզում էին դուրս թափել:

Մարդիկ տեղներից վեր կացան, խառնւեցան և աղմուկ բարձրացրին: Գոչան թոթւեց դրօշակն և բոժոժների հնչիւնի հետ միասին բարձրածայն ու հրամայական եղանակով գուշեց.

—Լոեցէք.—և այս ձանը լսելուն պէս ամենքը լոեցին.

—Շարունակի՞ր, ի՞նչ էիր ասում:

—Գուգուան արդար է, ասեցի, զուր միք դատապարտի նրան. . Գուգուան և ես պատճառներ ունինք միմեանց արիւնարբութըշնամիներ դառնալու... Երբ դա սարիցն էր դալիս, գեծաններով տցն պատճառով վազեց, որ ինձ պէսք է սպաններ... սակացն ճանփի վրա թշնամուն հանդիպեց և զուր տեղն էք զրան դաւաճանող կարծում...

—Իսկ այդ ով յայտնեց քեզ.—յանկարծ գոշեց Գուգուան և կասկածից աչքերը հրավառւեցին:

—Ականջովս լսեցի... երբ դուն խօսում էիր, ես ճանփի միւս կողմն էի գաղւած... էլ ի՞նչ թազցնեմ... ընկերներիս մեղքը ի՞նձ վրա է ծանրացած, ես եմ պարտական նրանց կոտորածի մէջ... ես խելքս տանուլ տւի, թշնամին անցաւ գողունի իմ անզգուշութեան պատճառով... Գուգուան անմե՛ղ է:

Ծնիսէն խօսում էր շտապ-շտապ ու յուզւած և ամբողջ մարմնով դողում էր: Ծնիսէի խօսքերը կայծակնահար արին այնտեղի հանդիսատեմներին, որոնք ապշած նայում էին նրան:

Ահաբեկւած ծերունին ուժգին հառաչեց, շվեց ճակատը ձեռքով և բացականչեց զժգոհելով:

—Ուրեմն այդպէս ես հասկացել խրատներս. անիծւես դուն բոլորի աչքից ընկած, հօրն ու մօրը գերեզմանից հանող... ի՞նչ պատիժ կայ, որ քեզ համար վճռենք... այս խօսքերից յետոյ ծերունին դիմեց դատաւորներին.

—Մեր զաւակների արիւնը երկնքում բողոքում է Արար-

չին և արդար գատաստան է աղերսում, վճռիր, այ համացնք:  
Բաւական երկարատև յուզմունքից և աղմուկից յետոյ հա-  
մացնքի դլխաւորները մօտեցան Գոչային և մեղմօրէն արտասանեցին.  
—Գոշա, որդիդ ձորը չէ ծախել... միայն ջահելութեամբ  
յափշտակել է և ինքնամոռացութեան մէջն ընկել...

—Առաւել լաւ ապացոյց է, որ սասարիկ պատժւի... մարդու  
նամուսը բեղերն են... 0նիսէն արդէն մեռած է... դրա պատիժը  
կրակի մէջ այրելն է:

—Գոչառ, —փորձեցին հանգստացնել նրան, սակայն բերանը  
փրփրակալած ձորի նահապետը կայծեր էր թափում աչքերից:

—Պէտք է մեռնի, մեռնի անողորմաբար... և եթէ դուք չէք  
կարողանում օրինաւոր կերպով վարւել... նայեցէք ինձ... ծերու-  
նին մերկացրեց խանչալն, վազեց դէպի որդին ու գոչեց.

—Ընկերներին դաւաճանողը արժանի չէ կեանքի:  
Այս խօսքերի հետ ֆայլեց խանչալը և 0նիսէն սկսեց գետնի  
վրա թեփրիկ գալ. ծերունու սուրը երկու կէս էր արել զաւակի  
սիրտը: Այս զործողութիւնը այնպէս արագ կոտարւեց, որ ոչ ոք  
չկարողացաւ քամբաղտութեան առաջն առնել:

Բազմութիւնը յետ քաշւեց և այլ ևս չէր համարձակւում  
ծերունուն մերձենալ, որի դէմքի մկանները սաստիկ կծկում էին  
և տարօրինակ կերպով ձգձգում նրա դէմքը:

—Գոչառ, փոքր ժամանակից յետոյ մէկը բռնեց նրա  
ձեռքը:

—Հայ, —անմիտ կերպով արտասանեց ծերունին և յետ նայեց:  
Նրա առաջ կանգնած էր Գուգուան:

—Գոչառ, —կրկնեց նա բարձրաձայն. —անցեալ անգամ ասի  
քեզ, որ մեղապարտ չեմ և միանգամ արդէն այսպէս մեղաղբւե-  
լուց յետոյ այլ ևս ապլելու չեմ... Տղամարդը իր թքածը չի կարող  
յետ վեր լինել... Թնաս բարով, Գոշա, Թնաս բարով ժողովնորդ. այս  
խօսքերն ասելով հանեց դաբանչէն, դրեց բերանի մէջ լուլէն և  
օդի մէջ ցնդեց ուղեղը...

Ծերունին հառաչեց միայն, նայեց բոլորի շուրջը ահաբեկւած  
աչքերով և սարսափեց: Յետոյ սկսեց դողացնել և արիւնոտած խան-  
չալը, որ ձեռին ունէր բռնած, հեռու շպռուց... քանի մի բոպէ

այնպէս անխօս մնաց, գլուխը պտտեց և ծնկները ծալւեցան. նա փարւեց իր որդուն և քանի մի անգամ մեղմաձայն կրկնեց.

—«Որդի, որդի» ու վրան կպած մնաց:

Բաւականի ժամանակ ողլում էր Օնիսէի սառած դիակի վրա. յետոց վեր նայեց, սկսեց վայրենսաբար դէս ու դէն նայել և յանկարծ տեղից վեր թռաւ վախեցած.

—Հեռո՛ւ, հեռո՛ւ... գոչեց նա և օդի մէջ կառկառեց բազուկ-ները.—արիւն, խամնչալ... որդիս, զաւակս Խ՞նչ եղաւ որդիս, գո-չեց որոտաձայն և սկսեց վազրի նման մռնչել...

Անցաւ բաւականին երկար միջոց, ձորը խաղաղւեց. կեանքն ստացաւ իր սովորական ընթացքը:

Սակայն Սամուերօ անտառը բոլորի համար էլ մի խուսափելու և անհրապոյը տեղ գարձաւ, որովհետեւ խելագար Գոչան այնտեղ բնակու-թիւն հաստատեց և անցորդ դարձւորին իր որդու մասին հարցմունքներ տալով անհանգստացնում էր: Ամենքին հրաւիրում էր իր տուն և պատմում էր, որ իր որդուն հեռու երկրից է սպասում: Յետոց սկսում էր սպառնալյ եթէ հասկացնում էին նրա որդու դլսին եկածը թէ ինչ էր պատահել Օնիսէին, իր պատմութիւնը վերջացնում էր սարսափեցնող վայնատւնով:

Այսպէս էին սահում ծերունու կեանքի օրերը մինչեւ այն ժա-մանակ, երբ մի անգամ ձմեռւայ միջոցին մի տեղ ձորակում ձիւնը խեղղել էր նրան:

Իսկ ինչ վերաբերում է Զիձիային, նրան այն օրից ի վեր, երբ Օնիսէից հեռացաւ, այլ ևս ոչ ոք չի տեսել<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Ակա պատմութիւնը բառառբառ պատմեց ինձ խիստ ծերացած մոխոցի խև Դինջան: